



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

10 մայիս 2022

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Ծովինար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Տիգրան Նազարյանը, Ռոմիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, խորհրդական Գևորգ Սաքանյանը, օգնական Գառնիկ Խաչատրյանը, Գետափի վարչական ղեկավար Երվանդ Գալստյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արմեն Աղաջանյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Հայկանուշ Ավագյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Նաիրա Ստեփանյանը, գլխավոր մասնագետ Լուսինե Մարտիրոսյանը, առաջին կարգի մասնագետ Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ մայիսի 10-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 10-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3) Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:

4) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

6) Համայնքային սեփականություն համարվող չօգտագործվող ոռոգման խողովակաշարը ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

7) Համբարձում Արտեմի Մանուկյանին հատկացված հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

8) Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու և Մայիշկա համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 6-ի թիվ 41-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուններով մալուխային գծերի անցկացման և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տերմինալների տեղադրման համար թույլտվություն տալու և համապատասխան վճարների չափերը որոշելու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 8-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 7 հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

11) «Եղեգնաձորի ԲԿՏ» ԲԲԸ-ի խորհրդի կազմում Եղեգնաձորի համայնքապետարանի ներկայացուցչի թեկնածությունը առաջադրելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 3-ի թիվ 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

